



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
 Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 563363, 580219, 094 40 46 24,
 E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

17.04.2017թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
 Գարրիել Գյոզայանին
 Էլ. հասցե՝ aragatsotn@mta.gov.am

Հարգելի՛ արն. Գյոզայան

2017թ. ապրիլի 14-ին «Հետքը» հրապարակել էր «Քաղաքապետարանի ցուցումով քաղաքի աղբը թափում են բնակչի տան շրջակայքում» վերտառությամբ հոդվածը, որտեղ ներկայացված է Աշտարակ քաղաքի բնակիչ Նարեկ Բոցինյանի կողմից Փարփեցու փողոցում՝ նրա տան շրջակայքում թափվող աղբի խնդիրը(մանրամասները տե՛ս հոդվածում):

Հաշվի առնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների հիմքերը՝ վերոգրյալի կապակցությամբ խնդրում եմ տրամադրել տեղեկություն հետևյալի մասին:


1. Արդյո՞ք ծանոթ եք վերոհիշյալ հրապարակման մեջ նշված իրավիճակին, դրա առնչությամբ մարզպետարանը ի՞նչ քայլեր է ձեռնարկել:
2. Ո՞ր գերատեսչությունների հետ է խնդիրը քննարկվել և ի՞նչ պայմանավորվածություն է ձեռք բերվել:
3. Եթե չեք նախաձեռնել ոչինչ, խնդրում եմ նշել՝ ինչո՞ւ:

Հարգանքով՝



Հետաքննող լրագրողներ» հ/կ նախագահ,
 «Հետք» թերթի գլխ. խմբագիր

Է. Բաղդասարյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

№ _____
Ի պատասխան Ձեր 18-04-2017թ. գրության

<<Հետաքննող լրագրողներ>>
հ/կ նախագահ <<Հետք>> թերթի գլխավոր
խմբագիր պարոն Է. Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան

Աշտարակ քաղաքի Ղազար Փարպեցու փողոցի շրջակայքում թափվող աղբի խնդիրը քննարկվել է Աշտարակի քաղաքապետի տեղակալի հետ: Աշտարակի քաղաքապետին գրավոր առաջարկվել է խնդրի լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել:

Կից ներկայացվում է Աշտարակի քաղաքապետի գրավոր պատասխանի պատճենը:


Առդիր 1 էջ:

Հարգանքով՝

Ի.ԳՅՈՂԱԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com



21 ԱՊՐԻԼԻ 2017թ.
ԹԻՎ 758

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ,
ՊԱՐՈՆ՝ Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գյոզայան

Ի պատասխան 19.04.2017թ. Ձեր N 01/14.1/1546-17 գրության հայտնում եմ, որ Ղ. Փարպեցու փողոցի նշված հատվածում ներկայումս կատարվում են շինարակական և մաքրման աշխատանքներ, ուստի Ձեր կողմից բարձրացված հարցին սեղմ ժամկետներում կտրվի համապատասխան լուծում:

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝

<Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ

Է. Մելիքյան

/0232/3-10-26*115